ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2024 թվականի №-Ա

«ԼՈՌՎԱ ԱՄՐՈՑ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հուլիսի 13-ի №298-Ա որոշմամբ «ԼՈՌՎԱ ԱՄՐՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Լորիբերդ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0705 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0705 լիցենզիա) պայմանների 13-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2023 թվականի հուլիսի 14-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), սակայն չի ներկայացրել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2024 թվականի հուլիսի 14-ը,

բ) Ընկերությունը մինչև 2024 թվականի հուլիսի 14-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, սույն թվականի հուլիսի 18-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 18-ի №ԳԲ/34.3-Մ2-12/3292-2024 գրությամբ,

գ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Կարգի №3 հավելվածի՝

- 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը, Կարգի համաձայն, 2-րդ անգամ երկարաձգվել է,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին.
  1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
  2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար,

- 10.1-ին կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում ներկայացված 2024 թվականի հունիսի 27-ի, հուլիսի 1-ի և հուլիսի 15-ի գրություններով վկայակոչելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և Հանձնաժողովի Կարգի մի շարք դրույթներ, հայտնել է, որ 2021 թվականի հուլիս ամսից սկսած ձեռնամուխ է եղել լիցենզիայով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարմանը, մասնավորապես օրենքով սահմանված կարգով հայտ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն (այսուհետ՝ Լիազոր մարմին) Կայանի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման խնդրանքով: 2021 թվականից ի վեր, Ընկերությունը մասնակցել է թվով երկու հանրային լսումների, ստացել է օրենքով նախատեսված համայնքների նախնական համաձայնությունը, բարեխղճորեն կատարել է Լիազոր մարմնի կողմից մատնանշված գործողությունները և վերացրել է արձանագրված թերությունները, դրսևորել է պատշաճ ջանասիրություն և ամենօրյա գործունեությամբ իր մասով ապահովել է նախատեսվող ծրագրի իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների և միջոցառումների տրամաբանական ընթացքը: Մինչդեռ, Ընկերության կողմից ներկայացրած հայտերը շուրջ հինգ և ավելի անգամ հետ են վերադարձվել լրամշակման և թերությունների վերացման նպատակով: Լիազոր մարմինը, անտեսելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 5-րդ, 9-րդ և 11-րդ հոդվածներով սահմանված սկզբունքները վարչարարությունը իրականացրել է արհեստական ձգձգումներով հայտերի վերադարձման հիմքում դնելով լրամշակման և շտկման ոչ ենթակա հանգամանքներ: Գրեթե բոլոր հայտերի վերադարձման հիմքում դրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի №488-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) ընդունման հանգամանքը, որով կարգավորման ենթակա իրավահարաբերությունը վերաբերվում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 30.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի պահանջի կարգավորմանը, այն է՝ ջրօգտագործման թույլտվության տրամադրման կամ մերժման հարցերին: Ուստի՝ 2022 թվականի ապրիլի 21-ին տրամադրված №0068-22 ջրօգտագործման թույլտվության առկայության պայմաններում Որոշումը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման իրականացմանը: Ընկերությունը հայտնել է նաև, որ մի քանի անգամ գրավոր դիմել է Լիազոր մարմնին՝ քննարկումներ կազմակերպելու խնդրանքով, որոնց արդյունքում պարզվել է, որ հայտերը պարբերաբար վերադարձնելը փաստացի կապված է Որոշման առկայության և այն՝ որպես խոչընդոտող հանգամանք դիտարկելու հետ, և Լիազոր մարմինը գրություններով հայտնել է, որ խոչընդոտելու է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը, քանի դեռ չի որոշվել Որոշման փոփոխության հարցը, նշելով, որ իր նախաձեռնությամբ Որոշման մեջ կկատարի համապատասխան փոփոխություններ միայն Որոշման վիճարկման հետ կապված №ՎԴ/9255/05/21 դատական գործով վերջնական որոշման կայացումից հետո: Միևնույն ժամանակ, Ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումին Լիազոր մարմնի կողմից 2024 թվականի հունվարի 16-ի №5/07.3/511 գրությամբ տրված պատասխանից պարզ է դարձել, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը տեղի չի ունենալու այնքան ժամանակ, քանի դեռ №ՎԴ/9255/05/21 վարչական գործով վերջնական դատական ակտ կայացված չէ: Ավելին՝ Ընկերությունը մտավախություն ունենալով, որ Լիազոր մարմինը հայտը ստանալուց հետո ոչ իրավաչափորեն կկայացնի նախատեսվող գործունեության անթույլատրելիության մասին որոշում և Ընկերության կողմից արդեն իսկ կատարված ողջ աշխատանքը, ծախսված ռեսուրսներն ու ֆինանսական միջոցները կդառնան վատնված, կրկին անգամ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի ներկայացումը համարել է իմաստազուրկ:

Վերոշարադրյալը ամփոփելով՝ Ընկերությունը պնդել է, որ Նախագիծը 2-րդ անգամ երկարաձգվելուց հետո սահմանված ժամկետում չներկայացնելը հանդիսացել է ֆորս մաժորի արդյունք, մասնավորապես՝ Լիազոր մարմինը ցուցաբերել է ոչ իրավաչափ վարքագիծ, պարբերաբար հետ է վերադարձրել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտերը և գործընթացի տրամաբանական առաջընթացն ապահովելու տեսանկյունից դրսևորել է անգործություն, ինչը չի գտնվում Ընկերության վերահսկողության ներքո և վերջինս ձեռնարկել է օրենքով սահմանված բոլոր հնարավոր միջոցները՝ առաջացած իրավիճակը կանխելու, մեղմելու, վերացնելու ու դրանից խուսափելու համար: Նշվածից հետևում է, առկա է Կարգի №3 հավելվածի 10-րդ կետով նախատեսված երաշխիքով սահմանված գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հիմքը, այն է՝ Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելը հետևանք է ֆորս մաժորի:

Արդյունքում՝ եզրափակիչ մասում Ընկերությունը խնդրել է դադարեցնել այնպիսի գործողությունների կատարումը, որոնք ուղղված են Ընկերության կողմից Նախագիծը Հանձնաժողովին չներկայացնելու հետևանքով երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելուն և ընդունել բարենպաստ վարչական ակտ, այն է՝ ԼԷ №0705 լիցենզիայով սահմանված պարտավորության ոչ պատշաճ կատարումը համարել ֆորս մաժորի արդյունք և կիրառել Կարգի №3 հավելվածի 10-րդ կետը:

զ) Ընկերությունը 2024 թվականի հուլիսի 31-ի գրությամբ խնդրել է իր կողմից ձեռնարկված բոլոր անհրաժեշտ միջոցների ու ջանքերի գործադրման վերաբերյալ հիմք ընդունել իր՝ 2024 թվականի հունիսի 27-ի և 2024 թվականի հուլիսի 15-ի գրություններով ներկայացված հիմնավորումները և ապացույցները: Բացի այդ Ընկերությունը հայտնել է, որ ֆորս մաժորի առկայությունը հիմնավորելու նոր հիմքեր և ապացույցներ ներկայացնելու համար Լիազոր մարմնից խնդրել է տրամադրել 2021 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի հուլիսի 18-ը ներառյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում կազմված բոլոր թղթակցությունների պատճենները, 2022-2024 թվականների ընթացքում տեղի ունեցած քննարկումների արձանագրությունները և խնդրել է տրամադրել մեկ ամիս ժամանակ՝ ֆորս մաժորի առկայության վերաբերյալ լրացուցիչ ապացույցներ ու հիմնավորումներ ներկայացնելու համար:

է) Ընկերությունը 2024 թվականների օգոստոսի 30-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել նաև Լիազոր մարմնին ուղղված իր 2024 թվականի օգոստոսի 14-ի №091 հարցումը, որով խնդրել էր հայտնել, թե արդյոք Որոշումը խոչընդոտ է հանդիսանում Կայանի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի իրականացմանը և արդյոք նշված գործընթացի համար անհրաժեշտ է №ՎԴ/9255/05/21 վարչական գործով վերջնական դատական ակտի առկայությունը, ինչին ի պատասխան՝ Լիազոր մարմինը 2024 թվականի օգոստոսի 28-ի №4/04.9/9506 գրությամբ պատասխանել է, որ Կայանի գնահատման և փորձաքննության գործընթացում պետք է դիտարկվեն և հաշվի առնվեն ոլորտին առնչվող գործող օրենսդրության պահանջները, այդ թվում՝ Որոշումը: Ընկերությունը հայտնել է նաև, որ իր կողմից ձեռնարկված անհրաժեշտ միջոցներից ու ջանքերից է այն, որ №ՎԴ/9255/05/21 վարչական գործով հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, որպեսզի վերացնի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի

նկատմամբ նշանակություն ունեցող խոչընդոտը, և տվյալ հայցը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2023 թվականի հունվարի 31-ի որոշմամբ բավարարվել է (նշված դատական գործով Լիազոր մարմնի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի վարույթում): Ելնելով վերոգրյալից և պնդելով մինչ այդ ներկայացված հիմքերը և հիմնավորումները՝ Ընկերությունը կրկին խնդրել է ընդունել բարենպաստ վարչական ակտ, այն է՝ ԼԷ №0705 լիցենզիայով սահմանված պարտավորության ոչ պատշաճ կատարումը համարել ֆորս մաժորի արդյունք և որպես հետևանք՝ ներկայացված բանկային երաշխիքով սահմանված գումարի կեսը պետական բյուջե չփոխանցել:

ը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0705 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով սահմանված, այնուհետև երկարաձգված ժամկետում՝ մինչև 2024 թվականի հուլիսի 14-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով, իսկ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու՝ Կարգով սահմանված հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Կարգի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի, մինչդեռ, տվյալ դեպքում Ընկերության կողմից չի հիմնավորվել Նախագիծը ԼԷ №0705 լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու իր պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար: Մինչդեռ, Ընկերությունը չի ապացուցել և չի հիմնավորել իր կողմից մատնանշված հանգամանքների առկայությունը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության

դեպքում: Բացի այդ, Կարգի №3 հավելվածի 10.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից: Տվյալ պարագայում, Ընկերությունը Նախագիծը ԼԷ №0705 լիցենզիայով ամրագրված ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու իր պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը հիմնավորել է Լիազոր մարմնի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը չիրականացնելու հանգամանքով (մինչ №ՎԴ/9255/05/21 դատական գործով վերջնական դատական ակտի կայացումը) և հայտնել, որ իր կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ բոլոր միջոցներն ու ջանքերը, մինչդեռ, վարույթի շրջանակներում ներկայացված փաստաթղթերից պարզ է դառնում, որ Լիազոր մարմինը (2023 թվականի ապրիլի 4-ի №1/26.7/6045 գրությամբ) նախնական գնահատման հայտը վերադարձրել է լրակազմման մի շարք բովանդակային և տեխնիկական թերությունների առկայության հիմքով (հայտում բացակայել են անհրաժեշտ տեղեկություններ, հաշվարկներ, հղումներ, առկա են եղել անհամապատասխանություններ) և հայտնել, որ փարձաքննության գործընթացը կսկսվի լրակազմ հայտի թղթային և էլեկտրոնային տարբերակները ներկայացնելու դեպքում: Ընդ որում՝ վարույթի շրջանակում ներկայացված գրություններից պարզ է դառնում, որ Ընկերության կողմից հայտը չի լրակազմվել և ներկայացվել լիազոր մարմնին՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակով: Ընկերության նշած պատճառաբանությունը, որ իր գործողություններով չէր կարող վերացնել Որոշումը, և հետևաբար՝ չի վերացրել հայտի մասով Լիազոր մարմնի մատնանշած թերությունները և չի դիմել Լիազոր մարմնին, չի կարող փաստել ֆորս մաժորի առկայությունը: Մասնավորապես՝ Ընկերությունը տվյալ պարագայում չի ձեռնարկել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրականացմանն ուղղված՝ բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը, այն է՝ չի լրակազմել և կրկին ներկայացրել համապատասխան հայտը և նշված գործողությունը կապել է №ՎԴ/9255/05/21 դատական գործի հետ, որով վիճարկվում է Որոշումը, մինչդեռ Որոշումը վերաբերում է դրանով նախատեսված գետերի պարագայում ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժմանը և նշված դատական գործով եզրափակիչ դատական ակտի առկայության պարագայում վերջնական լուծում է տրվելու Ընկերության և Լիազոր մարմնի միջև եղած՝ ջրօգտագործման թույլտվության մասով տարաձայնություններին:

Ընդ որում՝ Լիազոր մարմնի՝ 2024 թվականի օգոստոսի 28-ի №4/04.9/6506 գրությամբ ներկայացված դիրքորոշումից պարզ է դառնում, որ №ՎԴ/9255/05/21 վարչական գործով վերջնական դատական ակտի առկայությունը ընդամենը կարևորվում է փորձաքննության գործընթացում, և որևէ կերպ չի փաստվում վերջնական դատական ակտի բացակայության պարագայում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի իրականացման հնարավորության բացակայությունը: Միևնույն ժամանակ, Ընկերության կողմից չի հիմնավորվել Լիազոր մարմնի կողմից անգործություն դրսևորելու հանգամանքը: Ընկերության կողմից չի հիմնավորվել նաև, որ եթե գնահատման հայտը լրակազմվեր և ներկայացվեր, ապա Լիազոր մարմինը այն կմերժեր պայմանավորված միայն №ՎԴ/9255/05/21 վարչական գործով վերջնական դատական ակտի բացակայությամբ, ընդ որում՝ այդ հանգամանքը չի փաստվում նաև Ընկերության կողմից ներկայացված՝ Լիազոր մարմնի գրություններով: Կարևոր է փաստել նաև, որ ԼԷ №0705 լիցենզիան Ընկերությանը տրվել է 2022 թվականի հուլիսի 13-ին (Հանձնաժողովի նույն օրվա №298-Ա որոշմամբ, որի հավելվածով հաստատված լիցենզիայի պայմաններով ամրագրվել է Ընկերության պարտավորությունը՝ մինչև 2023 թվականի հուլիսի 14-ը Հանձնաժողով ներկայացնել Նախագիծը), մինչդեռ՝ Որոշումը ընդունվել է դեռևս 2021 թվականի ապրիլի 8-ին և ուժի մեջ մտել նույն թվականի ապրիլի 19-ից: Այսպիսով՝ Ընկերությունը արդեն իսկ իրազեկ լինելով Որոշման ընդունված լինելու և ուժի մեջ մտած լինելու վերաբերյալ, ավելին՝ արդեն իսկ Որոշման առնչությամբ դատական գործընթացներ նախաձեռնած լինելով, Հանձնաժողով է դիմել էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու հայտով և ստացել համապատասխան լիցենզիան, որի շրջանակներում, ի թիվս այլնի, պարտավորություն է ստանձնել նաև մինչև 2023 թվականի հուլիսի 14-ը Հանձնաժողով ներկայացնել Նախագիծը: Նշվածից հետևում է, որ Ընկերությունը ԼԷ №0705 լիցենզիան ստանալու պահի դրությամբ արդեն իսկ տեղյակ լինելով գործող իրավակարգավորումների, մասնավորապես, Որոշման առկայության մասին, հնարավորություն ուներ կանխատեսել և գնահատել հնարավոր հետևանքները, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ և ջանքեր:

Վերոգրյալի արդյունքում փաստվում է, որ Ընկերության ներկայացրած հանգամանքները որևէ կերպ չեն փաստում Նախագիծը ԼԷ №0705 լիցենզիայով ամրագրված ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու՝ Ընկերության պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0705 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի մարտի 22-ի №652-2487 գրությամբ ներկայացված ՊԲԵՆ22/61-01 երաշխիքի համաձայն երաշխավորված 66 750 000 (վաթսունվեց միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ գումարից 33 375 000 (երեսուներեք միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 66 750 000 (վաթսունվեց միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2025 թվականի օգոստոսի 28-ը գործողության ժամկետով:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.
   1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0705 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2025 թվականի հուլիսի 14-ը.
   2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով Կայանի կառուցման նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0705 լիցենզիայի գործողությունը կկասեցվի:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հոկտեմբերի 2024թ.